ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 4-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 գնման պայմանագրում 2021 թվականի մայիսի 6-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 25.03.2021թ N397-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի

ք. Երևան <<06>> 05 2021թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ե. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.03.2021թ N 397-Ն որոշումը և Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին հաստատել 2021 թվականի աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը և վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի N1 և N2 հավելվածների:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածներ N1-ը և N2-ը բաղկացած են մեկական էջերից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	հ/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
կառավարական տուն 3	գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
ՀՀ ֆինանսների նախարարության	<Հայբիզնեսբանկ> ՓԲԸ,
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 11500374479000
Հ/Հ 900011023778	ՀՎՀՀ 00440841
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ե. Գևորգյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N1
04.11.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի
«06» «05» 2021թ. կնքված N4 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների կատարման

2021թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ ըստ աշխատանքների ծավալների

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ հազ. դրամով)	Աշխատանքների կատարման ժամկետը մինչև
1	39,980.008	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 120 օրացուցային օրը ներառյալ:
2	9,206.192	Պայմանագրի ծավալաթերթով նախատեսված թատրոնի շենքի դահլիճային մասնաշենքի քանդման և ուժեղացման աշխատանքները կսկսվեն ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետ կսահմանվի 30 օրացուցային օրը ներառյալ:

ըստ աշխատանքների առանձին տեսակների

N ը/կ	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կատարված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	Վերակառուցման միջոցառումներ, ներքին հարդարման աշխատանքներ, ներքին հաղորդակցուղիների կառուցման աշխատանքներ, արտաքին գազամատակարարում, վերելակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 120 օրացուցային օրը ներառյալ:
2	Վերակառուցման միջոցառումներ, ներքին հաղորդակցուղիների կառուցման աշխատանքներ, արտաքին հարդարման աշխատանքներ,	Պայմանագրի ծավալաթերթով նախատեսված թատրոնի շենքի դահլիճային մասնաշենքի քանդման և ուժեղացման աշխատանքները կսկսվեն ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից և կատարման ժամկետ կսահմանվի 30 օրացուցային օրը ներառյալ:

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
<Հայբիզնեսբանկ> ՓԲԸ,
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝

---------- Ե. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N2
04.11.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի
«06» «05» 2021թ. *կնքված N4 համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքներ

ՀՀ դրամ

Աշխատանքի																		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2019թ. վճարված գումարը	2020թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
					հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	45611200/1	Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքներ	45 381 100	14 110 443	-	-	-	-	-	-	49 186 200	49 186 200	49 186 200	49 186 200	49 186 200	49 186 200	49 186 200	

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
հ/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
<Հայբիզնեսբանկ> ՓԲԸ,
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝

_____ Ե. Գևորգյան
(ստորագրություն)

Կ.Տ.

N 2545-02
«30» 04 2021

ԵՐԱՇԽԻՔ N 2545-02
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի** միջև կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **10,868,000 (տասը միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև **02.05.2022**թ-ը օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի տեղակալ՝ **Ն. Գրիգորյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Ն. Սարգսյան**